ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[5]-22.11.2022-ՏՀ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ»
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ <u>ԼՐԱՑՈՒՄՆԵՐ</u> ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1**. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 9-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.~~

~~«Առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառելը՝»~~

~~**Հոդված 2**. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.~~

~~«Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման պահանջները կամ պայմանները չապահովելը»~~

~~**Հոդված 3**. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.~~

~~«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարերեքհարյուրապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով և տեխնիկական~~

~~նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլտվությունից զրկում՝ մեկ տարի ժամկետով։»~~

~~**Հոդված 4.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.~~

~~«Սահմանված կարգով տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման թույլտվություն չստացած իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ, հրագործական բաղադրիչներ և այլ պայթուցիկ սարքեր (նյութեր) վաճառելը՝»~~

~~**Հոդված 5.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169.16-րդ հոդվածը լրացնել 11.1 մասով հետևյալ բովանդակությամբ.~~

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի 169.16-րդ հոդվածում՝

1) 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակ, պայթուցիկ նյութեր, պայթեցման սարքավորումներ կիրառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:»

2) 10-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից հրագործական արտադրատեսակի, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների համապատասխան լիցենզիայի պայմանները կամ պահանջները չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև երեքհազարապատիկի չափով:»

3) 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակի կիրառման համար օրենսդրությամբ սահմանված պայմանները կամ պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից մինչև երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

4) լրացնել նոր 11.1-ին և 11.2-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ հրագործական արտադրատեսակի, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուրը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից մինչև երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից մինչև երեքհազարհինգհարյուրապատիկի չափով.

11.2. 16 տարին չլրացած անձանց կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակներ վաճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

~~Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո:~~

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո: